— Ժամ մը կայ, որ ես արդէն զքեզ տեսայ, երբ բլուրին գուխն էի եւ դու դեռ դաշտն էիր:

— Ուսկի՛ց այսպէս կ'ուգաս:

— Տարոնոյ:

— Բայց այնչափ համառօտ պատասխաններ կ'ուտաս, որ պէտք է դադրեցնեմ խօսիլս:

— Ինչո՞ւ, իշխան, ե՞րբ ինձի հետ խոսէր ես եւ առանց պատասխանի ես մնացեր:

— Կ'ուզէի հարցնել թէ ո՞ւր կ'երթաս:

— Լաւ՛, քեզի այդ էլ նաեւ զրուցեմ, Հայոց կաթողիկոսը տեսնելու կ'երթամ:

— Անշուշտ իրեն առաջարկութիւն մը ունիս:

— Ինչպէս չունիմ. կ'ուզես ա՛յն էլ իմանալ, լաւ՛,– այն պիտի առաջարկեմ, որ կոնդակ մը հանէ բոլոր Հայաստան, ամէն տեղ նուիրակներ, քարոզիչներ յուղարկէ, որ սուրբ պատերազմի ժամանակը եկած հասած է, եւ նզովի այն ամէն մարդ, որ կարողութիւն ունի զէնք վերցնելու եւ չի շարժիր, այն ամէն հայ, որ հաց կրնայ տանիլ պատերազմողին եւ չի տանիր, նա՝ որ ձի եւ զէնք ունի՝ չի գործածէր՝ կը պահէ եւ ուրիշի չի տար: Վերջապէս պիտի յորդորեմ զինք, որ առանց դանդաղելու դա նստի Ս. Կարապետ, իւր բոլոր եկեղեցական դասով, եւ թէ իշխանները չի շարժին ինք ձայն արձակէ եւ ժողովուրդք կը շարժին:

— Այդ բանի՞ն համար կ'երթաս, ապրի՛ս Յովնան, շատ պատուական հայ ես, եւ բոլոր Հայաստանի մէջ թերեւս քեզմէ աւելի հայրենասէր մարդ չի կայ այսօր: